

ԱՐՑԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՎՐԱՑ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
XVIII դարի երկրորդ կեսին

Հայոց քաղաքական միտքը ազատագրական իր ծրագրերում մշտապես կարևոր տեղ է հատկացրել Վրաստանին և հայ-վրացական հարաբերություններին: Հայ-վրացական հարաբերությունները XVIII դարում ձևավորվում էին ինչպես բուն Վրաստանում՝ ժողովուրդների բազմաբնույթ հարաբերությունների հենքի վրա, այնպես էլ բուն Հայաստանում և տարածաշրջանում՝ վրաց իշխանությունների ունեցած առնչությունների ոլորտում: Հայազգի գործիչները հաճախ ընդգրկվում էին նաև Վրաստանի արտաքին հարաբերությունների ձևավորման ոլորտ և իրականացնում Վրաց արքունիքի դիվանագիտական բանակցությունների վարումը այլևայլ պետությունների ու երկրների հետ¹:

Պարսկաստանում Նադիր շահի սպանությունից անմիջապես հետո և XVIII դարի երկրորդ կեսի ընթացքում առաջացած քաղաքական նոր իրադրության պայմաններում, ի տարբերություն հայ իրականության, վրաց իշխանություններին հաջողվում է ձեռք բերել փաստացի անկախություն՝ պահպանելով Իրանական պետության մեջ նախկինում ունեցած «Գուրջիստանի վալիի» իրենց բարձր կարգավիճակն ու համարումը և ներկայանալ որպես իրանական պետության ճակատագրով «մտահոգ» գործիչներ: «Մահմեդական չալմայով քրիստոնեության համար պայքարի այս ձևը»², որ շարունակում էին կիրառել Վրաց Բագրա-

¹ XVIII դարի երկրորդ կեսին նման գործիչներից էին Օթար Թումանովը, Գուրգեն Ենիկոլայանը, Սուլխան Թումանյանը և այլք: Վրաց արքունի դիվանագիտիկներ Թումանյանների (վրաց իրականության մեջ՝ Թումանիշվիլի) տոհմածառը տես **Cyrille Toumanoff**. *Les Dynasties de la Caucasic Chretienne*. Roma, 1990, p. 338-345, 565-566.

² Գ. Ֆոֆտաձե, *Քրիստոնեությունը և իրանական իշխանությունները XIII-XVIII ևս., տն., 1982, թ. 242.*

տունի թագավորները արտաքին քաղաքականության մեջ նաև XVIII դարի ընթացքում, անհրաժեշտ հանգամանք էր իրենց դիրքերն ամրապնդելու համար:

1740-ական թթ. վերջերին և 1750-ական թթ. սկզբներին Չայաստանի տարածքում հայազգի իշխանավորները, աստիճանաբար զիջում են անգամ նախորդ տասնամյակներին արդեն իսկ իրենց ունեցած դիրքերը. Արցախում ստեղծվում է մահմեդական խանություն, իսկ Երևանում, Նախիջևանում և Գանձակում ամրապնդվում են մահմեդական կառավարիչների դիրքերը: Պարտություն են կրում Շահկերտի ու Ագուլիսի ինքնապաշտպանությունները:

Չայոց հասարակական-քաղաքական կյանքի ուղղորդիչ իր դերակատարումով XVIII դարի կեսերից առանձնապես կարևորվում է Էջմիածնի կաթողիկոսության ազդեցությունը, որը աստիճանաբար թոթափելով 1730-40-ական թվականների ճգնաժամային իրադարձությունները, 50-ական թվականների վերջերից սկսում է վարել առավել նպատակաուղղված քաղաքականություն և վերածվում առավել ազդեցիկ գործոնի: Այդ գործընթացում նշանակալի էր Չակոբ Շամախեցի, իսկ այնուհետև նրա աշակերտ Սիմեոն Երևանցու և ապա Ղուկաս Կարնեցու վարած հավասարակշիռ և շրջահայաց գործունեությունը: Դեռևս 1745 թ. Նադիր շահի կողմից Ղազար Ջահկեցուն կաթողիկոսական գահից արտաքսումից և Չովհաննես Ագուլեցուն կաթողիկոս կարգելուց հետո, Ղազար Ջահկեցուն կրկին կաթողիկոսական Աթոռին վերադարձնելու գործում կարևոր դերակատարում ունեցած Չակոբ Շամախեցին¹, 1749 թ. ընդունում է նաև Արևմտյան Վրաստանի գահազուրկ եղած Ալեքսանդր V թագավորի կողմից օժանդակության ակնկալիքով դեսպանագնացությամբ Էջմիածին ժամանած Տիմոթեոս արքեպիսկոպոս Գաբաշվիլուն²: Չայոց Ղազար Ջահկեցի կաթողիկոսի անունից գրած իր նամակում ներկայացնելով Մայր Աթոռի վիճակը և դրանով պայմանավորված օժանդակության ցուցաբերման անհնարինությունը և վրաց

¹ Տես նրա վրաց թեմնուրագ II թագավորին և Թիֆլիսահայոց ու Մելիք Աղային գրած նամակները՝ ՄՄ, ձեռ. 6241, ք. 14ա, 78բ-79ա (ստորև՝ հավելված):

² Տ. Գաբաշվիլու գործունեության նախին տես Թիմոտեյ Գաբաշվիլու. Միմոսկոպ. Երևան, 1956. Գ. Յաֆթաձե. Թիմոտեյ Գաբաշվիլուի լեզբով և ռուսերենով (1737-1740 Վրացի), - Կարտուլու Նաթեջու-Նաթեջուրեթի Նաթեջու թեմնուրագի օրագրից, I, տ. 1970, ց. 151-180.

թագավորին մաղթելով իր խնդրանքը «յԱստուծոյ, զի զքեզ՝ զբաղձալիդ մեր, զպարծանսդ քրիստոնէից ի ձախողակի պատահմանց և ի չար դիտուածաց անվնասելի պահեսցէ... և վերստին ի յԱթոռ քո զքեզ անդրադարձուցէ մեծագոյն փառօք քան զառաջինսն», խնդրում է, որպէսզի էջմիածնի կացութեան մասին իմանա «ի սիրելի եղբօրէ մերմէ Տիմոթէոս արևոյ եպիսկոպոսէ, զոր ահա խաղաղութեամբ և սիրով ուղևորեցաք առ մեծութիւն քո»¹: Ընտրվելով Յայոց կաթողիկոս, Յակոբ Շամախեցին 1759 թ. վրաց թագավորներին ուղղած նամակում, ներկայացնելով իր ընտրութեան պարագաներն ու Մայր Աթոռի ծանր վիճակը, գրում է, թէ «ոչ ի սպառ յուսահատիմք, այլ՝ յուսամք յամենակարօղ և յողորմածն Աստուած, զի ... ի փորձութեանց և ի նեղութեանց մերոց աստի զմեզ, զձեզ և զազգս մեր ազատեսցէ և ի բարիս աւարտեսցէ վերջն մեր: Եւ զի յայսպիսի չարաբեր ժամանակս եմք և անյաջող դիպուածս այժմ, այն յաղագաւ խնդրենք առաւել հոգածու և օգնական լինիցիք սրբոյ Աթոռոյս և մեզ՝ Աթոռայնոցս, զի շէն և պայծառ մնասցի սա ըստ հոգևորին և ըստ մարմնաւորին...»²: Յակոբ Շամախեցին խնդրում-պարտավորեցնում է վրաց թագավորներին «զջուկութիւնս ոչ դնել ի միջի, այլ որպիսեօք սրտիւք և մտօք, որք զձեզ և զձերայինսն հոգայք, նոյնպիսեօքն զմեզ և զձերայինսն հոգասջիք... որք թէպէտ մինչև ցայժմ հոգացեալ էք, սակայն այժմ՝ յաւուրս մերում, և ևս առաւել հոգալ պարտիք»: Ըստ Յ. Շամախեցու, նրանք պարտավոր են այդ անելու, որովհետև «Նախ, զի ես՝ մեղաւորս, ի բնէ բարեկամ, սիրելի և մախածանօթ ձեր եմ... երկրորդ պատճառն, զի ժամանակս այսպէս վրդովեցեալ է և աշխարհս մեր անթագաւոր»³: Յակոբ Շամախեցին իր այդ դիրքորոշումը որդեգրել էր դեռևս 1740-ական թվականներից, երբ Այսրկովկասում հայոց համար հենարան կամ դաշնակից կարող էին լինել

¹ ՄՄ, ձեռ. 6241, էջ 13բ-14ա (սևագրություն): Ի դեպ, այս վկայությունը արժեքավոր է նաև Տիմոթէոս Գաբաշվիլու կյանքի ու գործունեության ուսումնասիրման առումով, որը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ որպէս Ալեքսանդր V-ի դեսպանութեան ղեկավար 1737-1739 թթ. եղել էր Ռուսաստանում, 1740 թ. ապրիլի 28-ին Մոսկվայում մասնակցել հայոց մահամերձ Միմաս արքեպիսկոպոսի դավանափոխութեան արարողութեանը, իսկ 1755-1759 թթ. ճանապարհորդել Երուսաղէմ, իսկ հետագայում փոխադրվելով Ռուսաստան, թաքցրել 1740 թվականից հետո իր Վրաստանում լինելու հանգամանքը (հմմտ. Պ. Չոբանյան, Վրաց ուղեգրությունները..., էջ 33-34):

² ՄՄ, ձեռ. 6241, էջ 16ա:

³ Նույն տեղում:

առաջադիմող վրաց թագավորները: Վրաց թագավորների համար էական կարող էր լինել հայոց օժանդակությունը: Երկուստեք ակնկալությունները թելադրում էին հայ-վրաց համագործակցություն:

Վրաց Թեյմուրազ II և Յերակլ II թագավորներին հաջողվում է, ինչպես ասվել է, հարկային կախվածության մեջ զցել Երևանի ու Գանձակի մահմեդական իշխողներին, իրենց ազդեցությունը մասամբ հաստատել Արցախի ու Նախիջևանի իշխողների նկատմամբ՝ ընդ որում մշտապես զգուշանալով նաև, որպեսզի իրենց պայքարը տարածաշրջանում չընկալվի որպես դավանական խտրականություն հետապնդող քաղաքականություն, թեև ըստ Պեյսոնելիի արձանագրման, այն մտահոգության առիթ էր դարձել հարևան Օսմանյան կայսրությունում. «1751 թ. սկզբին Թեյմուրազ և Յերակլ իշխանները աֆղանների ապստամբությունից անհանգստացած, ճանապարհ են ընկնում՝ նրանց դարձյալ վերադարձնելու այն լծի տակ, որը նրանք կարողացել էին թոթափել: Հայերն էլ իրենց հերթին միանում են վրացիներին: Այս բանակի մեջ մտնող բոլոր *զինվորներն իրենց հագուստների և դրոշակների վրա խաչեր էին կրում*: Խաչակիրներին նմանվող այս մարդիկ գնում են աֆղանների դեմ և հանդիպելով նրանց Օրդուար (Odouar) քաղաքի մոտակայքում, պարտության են մատնում նրանց և շատերին կտորկտոր անում: Այս մարտում Յերակլը իրեն այնպես դրսևորեց, որ այդ իրադարձությունը կարելի է համենատեղ հին ժամանակների ամենահերոսական իրադարձությունների հետ»¹: Յերակլի հաջողությունների մասին լուրերի չափազանցումները և թողած տպավորությունը արձանագրում է նաև Կ. Պոլսում ռուսական ռեզիդենտ Ա. Օբրեսկովը, 1752 թ. օգոստոսի 4-ին հաղորդելով, թե «այստեղի հույները ոչ միայն վրացիների հետ հավատակցության պատճառով ... որքան թուրքերի նկատմամբ չարությունից, որոնց տիրապետությունը իրենց՝ հունական, հնուց ի վեր արմատացած հպարտության հետ չի համատեղվում, ամբողջ հոգով ցանկանալով օտարի միջոցով ազատագրվել այդ տիրապետությունից», շտապում են ուրախանալ և հուսալ, որ «Յերակլը Պարսկաստանը նվաճելուց հետո կգրավի նաև Թուրքիան և, ուռճացնելով նրա

¹ Մ. Կ. Զուլայան, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների. XIII-XVIII դարեր. գիրք Ա. Քաղաքական պատմություն, Երևան, ՀԳԱ հրատ., 1990, էջ 324-325:

ուժերը՝ և հատկապես բնատուր տաղանդի ու զինվորական ունակությու-
նների համար նրան որպես մեկ այլ Ալեքսանդր Մեծ էին համարում
և ամենուրեք ամենայն ջանասիրությամբ փառաբանում էին: Ես, տեսնե-
լով այս ջանքերի անպատշաճությունը, նրանց, որոնց կարելի էր վստա-
հել, ասել եմ, որ իրենց այդպիսի լուրերը օգուտի փոխարեն վնաս կբե-
րեն վրացիներին...»¹: Զերակլի հաջողություններին արձագանքում էին
ոչ միայն հույները, այլև Կ. Պոլսի հայերը: Օբրեսկովի 1752 թ. օգոստո-
սի 4-ին գրած զեկուցագրի վկայությամբ. «Հայերը լսելով, որ իրենց
պատրիարքին Զերակլը ընդունել է բոլոր պատիվներով և իրենց՝ հայե-
րին, վրացիներին հավասար հովանավորում է, որոնք նրա զորքերում
կազմում են գրեթե կեսը, փառաբանում էին սնապարծությամբ, որ
իրենց հավատակիցները ուրիշներից ոչ պակաս լավ զինվորներ են և որ
դրանով գերության լծից, որի ներքո նրանք մի քանի հարյուրամյակ
գտնվում են, կազատագրվեն»²: Զերակլի հաջողությունների մասին
լուրերը առավել ուռճացվում էին Ֆրանսիայի դեսպանատան կողմից:
Ֆրանսիայի դեսպանը «տարբեր նկատառումներով իրենից կախված
հայերի, լատինների ու հրեաների խմբով այդ [լուրերը] ավելացնում էր
և, այդպիսով, ամբողջը հորինելով...որ իբր Զերակլը ռազմադաշտում
ուևի մինչև ութսուն հազարանոց բանակ»³:

Միանգամայն ակներև է, որ XVIII դարի երկրորդ կեսին հայ-վրա-
ցական պետության ստեղծման հնարավորության հարցը և Վրաց Բագ-
րատունիներին Հայոց թագավոր ևս ճանաչելու ձգտումները չէին կա-
րող հիմնված լինել Պետրոս I-ի 1722 թթ. տված խոստումի վրա, ինչպես
այդ հաճախ կրկնվում է հայ պատմագիտության մեջ: Այն հայ-

¹ Գ. Զաօժաձե, Դարձակա և Կաթողիկոսի խնամքով թողնելու Զերակլի շրջանում
XVIII ս-ի 50-60-ական Վրացի, - "Դարձակա խնամքով-Խնամքով թողնելու Զերակլի
և Կաթողիկոսի", II, Թբիլիսի, 1973, ԳԳ. 73, ՄԵԲ.

² "... Армяне, слыша, что Ираклий патриарха их со всею честью принял и их,
армян, равно с грузинцами содержит, которых и в войске его почти половина
находится, разславляли из тщеславия, что одноверцы их не хуже других добрые
войны и что тем из под ига неволи, в которой они чрез несколько сот лет нахо-
дятся, освободятся, грузинцы, находящиеся здесь, принявшие магометанскую
веру, которых великое множество, а иныя и в знатных чинах по оставшей ... еще
некоторой природной любви об отчизне с радостию процветание однородцев
своих слышали и по пристрастию також увеличивали" (Մույն տեղում).

³ Նույն տեղում:

վրացական երկարատև հարաբերություններին ուղեկցող գաղափարի արդյունք էր: Ռուսաստանը, ինչպես XVIII դարի առաջին քառորդին, այնպես էլ դարի վերջին քառորդին հմտորեն օգտագործում էր մահմեդական լծի դեմ հայ-վրացական համագործակցության հնարավորության հույսը և անկախություն ձեռք բերելու երազանքը: XVIII դարի երկրորդ կեսի առանձնահատկությունն էր Ռուսաստանի կողմից Վրաստանի նկրտումներին Չայաստանի տարածքի նկատմամբ բավարարում տալու միջոցով՝ շահելու վրացի և հայ գործիչների օժանդակությունը՝ Այսրկովկասում իր տիրապետությունը հաստատելու համար: Այդ առումով հասկանալի և բացատրելի է դառնում նաև այն փաստը, որ 1796 թ. Վ. Ջուրովի հրամանատարությամբ Ռուսական բանակի այսրկովկասյան արշավանքի ժամանակ ևս Երևանի գրավումը վերապահվում էր Չերակլ II-ին՝ բավարարում տալու ինչպես վրաց հավակնություններին, այնպես էլ դիվանագիտական հիմնավորում ստեղծելու՝ Օսմանյան թուրքիայի հետ անմիջական ընդհարումից խուսափելու համար:

Թերևս առանձին արձանագրման արժանի է միայն 1783 թ. ապրիլի 6-ին Գ. Պոտյոմկինի հայտնի հրահանգը Պ. Ս. Պոտյոմկինին. «Ձեզ ուղարկված կարգադրություններից դուք կհասկանաք ինչպես պետք է կապերը սերտացնել Չերակլ թագավորի հետ: Ձեռք բերելով նրա վստահությունը, դուք անվերապահ կկառավարեք նրան: Շուշիի խան Իբրահիմին պետք է տապալել, քանզի դրանից հետո Ղարաբաղը կկազմի Չայկական, բացի Ռուսաստանից, բոլորից անկախ, մարզ... Սրանով և Չայկական մյուս ուժեղ նահանգները կամ կհետևեն նրանց օրինակին, կամ թե մեծ քանակով [հայեր] կսկսեն գալ Ղարաբաղ»¹: Իր այդ քայլի մասին Գ. Պոտյոմկինը ծանուցել է Եկատերինա II-ին 1783 թ. մայիսի 19-ին. «Դեռևս չունենալով Ձեր Կայսերական Մեծության կարգադրությունը, ես գեմ. - պոր. Պոտյոմկինին Շուշիի Իբրահիմ խանի վերաբերյալ հրահանգ եմ տվել, որ կմոտեցնի նրան հնազանդության: Այստեղ անհրաժեշտ է քննարկել, որպեսզի հարմար առիթով նրա մարզը, որ բաղկացած է հայ ժողովրդից, հանձնել ազգային կառավարմանը և դրանով վերականգնել Ասիայում քրիստոնեական պետություն, ըստ Կայսերական մեծության Ձեր խոստումների՝ տրված իմ միջոցով Չայոց մելիքներին»²:

¹ Армяно-русские отношения..., IV, с. 239:

² Նույն տեղում, с. 241:

Տվյալ պարագայում, ինչպես ակնհայտ է, շրջանցված է Վրաստանը, որին և հարկատու էին Երևանի ու Գանձակի խամերը, իսկ Արցախի հայ մելիքների հետ իր հարաբերությունները Յերակլի համար ևս միջոց էին՝ Իբրահիմի հետ հարաբերությունները կարգավորելու գործում: Նման իրավիճակում դժվար չէ պատկերացնել Յերակլի մտահոգությունները ապագայի համար: Գ. Պոտյոմկինի այդ նամակները և իրահանգները գրվում և Այսրկովկաս էին ուղարկվում 1783 թ. գարնանը, երբ զուգահեռ ընթանում էին նաև բանակցությունները ռուս-վրացական պայմանագրի շուրջ, որի մի շարք ձևակերպումներին Վրաստանը համառորեն դիմադրում էր, և որը կնքվեց ի վերջո Գեորգիևսկում միայն 1783 թ. հուլիսի 24-ին: Դրանից հետո սպասելով Գեորգիևյան պայմանագրի վավերացման արարողությանը, Յերակլը արդեն պահանջում է Վրաստանին միացնել Գանձակի նահանգը, որի համար Գ. Պոտյոմկինը 1784 թ. ապրիլի 6-ի զեկուցագրում ծանուցում է Եկատերինա II-ին. «на желание ж его присоединении к Грузии персидской провинции Генжи, издавна уже ему принадлежащей, испрашиваю высочайшего повеления В. И. В. »¹: 1784 թ. կրկին աշխուժանում են գրագրությունները Յայոց ազատագրության մասին: Ռուսաց արքունիքի համար ակնհայտ էր, որ «Իբրահիմ խանը, վախենալով իր բռնապետությունից բաց թողնել այս (իմա՝ հայ - Պ. Չ.) ժողովրդին, փորձում է միանալ Ռուսաստանին»²: 1786 թ. մայիսի 26-ին Ս. Բուռնաշևը արդեն ստացել էր Իբրահիմ խանի մայիսի 23-ին գրած նամակը, որը նա ուղարկել էր Պ. Ս. Պոտյոմկինին: Արցախը ոչինչ հուսադրող լուրեր չի ստանում: Արդյո՞ք Յայոց պետականության վերականգնումի հնարավորության մասին լուրերը լրացուցիչ լծակներ չէին նաև Վրաց թագավորի և Ղարաբաղի խանի հնազանդեցումը արագացնելու ու Ռուսաստանի մուտքը Այսրկովկաս դյուրացնելու համար: Այդպիսի հարցադրումը դառնում է տրամաբանական և հավանական, որովհետև Յերակլը այդ լուրերից հետո ստորագրում է պայմանագիրը, հանդուս է Արցախի Իբրահիմ խանին Ռուսաստանի հովանավորությունը հայցելու նամակ գրել Ռուսական արքունիք, իսկ Գեորգիևյան պայմանագրով էլ իրավունք է ստանում Ռուսաստանի օժանդակությամբ գրավված բոլոր տարածքները միաց-

¹ Армяно-русские отношения..., IV, с. 299:

² Նույն տեղում:

նելու Կրիստոսին. **"Артикул второй.** Ея Имп. Величество ... обещает и обнадеживает Императорским Своим словом за Себя и Преемников Своих, что милость и покровительство их от Светлейших Царей Карталинских и Кахетинских никогда отъемлемы не будут. В доказательство чего, **Ея Величество дает Императорское Свое ручательство на сохранение целости настоящих владений Его Светлости Царя Ираклия Теймуразовича, предполагая распространить таковое ручательство и на такие владения, кои в течение времени по обстоятельствам приобретены и прочным образом за ним утверждены будут**"¹. Շուտով, սակայն, ծագում են նոր խնդիրներ:

Գեորգիևսկյան պայմանագիրը դեռևս նոր էր վավերացվել (1784 թ. հունվար), երբ Ա. Ա. Բեգրորդկոյի հաղորդմամբ, Գ. Ա. Պոտյոմկինը 1784 թ. մայիսին նամակով ծանուցել էր իրեն Պարսկաստանի ներկա փոխարքա Ալի Սուրադ խանի կողմից առաքված դեսպանագնացի ժամանելու մասին, «готовности все сделать, что нам угодно, желая приобрести благоволение государыни и признание его в шахском достоинстве» և այն մասին, թե Գ. Պոտյոմկինը «почитает сие за самый надежнейший способ к окончанию персидских наших дел заключением с ним договора»²: Ի հեճուկս Գեորգիևսկյան պայմանագրի, արդեն ենթադրվում էր, որ Ալի Սուրադ խանի հետ կնքելիք պայմանագրով «распоряжены будут наши приобретения, границы Ираклиева царства, состояние независимых областей Армянской и другой, из побережья Каспийского учреждаемой»³. Ենթադրվող երեք մարզերի գաղափարը թելադրում էր շարունակել Արցախի

¹ Պժ, II, թթ. 463-464.

² Армяно-русские отношения..., IV, с. 317. Հմմտ. **А. Р. Иоаннисян.** Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 131-132.

³ Ի հեճուկս Գ. Ա. Պոտյոմկինի սպասումների, Ալի Սուրադ խանը այդ առիթով դիվանագիտորեն պատասխանել էր Ռուսական արքունիքի հանձնարարությամբ դեսպանությամբ Սպահան ժամանած Հակոբ Անտոնյանին, թե «Если государыни угодно просить у меня области или города под протекцию, то я по благости божией имею власть и силу разделить всю Персию пополам в ее владение, однакож, **будучи я довольно известен, что государыня имеет весьма достаточны города и места, я не думаю, чтоб она просила области**» (Армяно-русские отношения..., IV, с. 301).

մելիքներին հուսադրումը, որի մասին լուրերի ի հայտ գալը, սակայն, չէին կարող չամհանգստացնել ոչ միայն Իբրահիմին, այլև Հերակլին:

1786 թ. նոյեմբերի 2-ին Պ. Ս. Պոտյոմկինին գրած նամակում Հերակլ II-ը հիշեցնում է տեղի ունեցած իրադարձությունների «տրամաբանական» ընթացքը և Այսրկովկասում իրադրության շիկացման, Վրաստանի կրած դժվարությունների ու թուրքական արքունիքի հետ Իբրահիմի մերժեցումի համար մեղադրում ռուսական կողմին. «Ձեզ հայտնի է, որ մեր և Իբրահիմ խանի միջև եղել է փոխադարձ երդում, և նա միշտ արտահայտվում էր դեպի մեզ այնպիսի բավականությամբ, որ թե մենք ուն հովանավորությամբը դիմենք, ապա նա ևս դրան կհամաձայներ և երբ մենք մտանք Ռուսական գահի հովանու ներքո, այնժամ մենք խորհուրդ տվեցինք Իբրահիմ խանին, որպեսզի նա ևս բարեհաճի դեպի Ռուսական բարձրագույն արքունիքին, որպեսզի նա լիազորագրով Ձեր բարձրագույնեղության մոտ ուղարկի իր մարդուն, որը և ուղարկեց մոլլա Վալիին այն նույն մարդու հետ՝ բացատրելով իր նվիրվածությունը և ջանասիրությունը համառուսական արքունիքին: Բավական ընդարձակորեն ձեզ հաղորդել է, որից հետո մենք (ևս) համոզել ենք մեր խորհուրդներով, որպեսզի նա ուղարկի իր հատուկ ներկայացուցչին, որը և ուղարկել է Մուսա Սուլթանին Բարձրագույն արքունիք: Ձեզ այդ բոլորը հայտնի է, թե ի՞նչ գործերով է ուղարկվել և ինչո՞վ է վերադարձել ես:

Երբ այստեղ ժամանեց Բարձրագույն արքունիքից դոկտոր Ռայնեգը, հենց նույն ժամանակ Ռուսաստանից եկավ խամսեցի մի հայ, նույն այդ հայը բերեց խամսայի մելիքներին նամակներ: **Նրանց մասին մենք ոչինչ տեղյակ չէինք, թե ի՞նչ գործեր էր նա կատարում**, որոշ ժամանակ անց մելիքներից՝ իրենցից իսկ, նրանց ամբողջ գրագրությունը բացահայտվեց: Տեղեկանալով այդ մասին, Իբրահիմ խանը ծայր աստիճան վրդովվեց և բռնագրավեց մելիքությունը մելիք Աբովից, որից հետո սկսեց մեր հանդեպ ևս դժգոհել, և այդ պատճառով՝ նաև ռուսական հովանավորությունից: Այդ ժամանակից սկսեց մեր նկատմամբ թշնամանալ, սկսեց գրագրություն Օսմանյան արքունիքի, Էրզրումի Պատալ փաշայի և Ախալցխայի Սուլեյման փաշայի հետ, հրահրում էր նրանց, որ նրանք ևս մեր նկատմամբ թշնամանան»¹:

¹ Армяно-русские отношения..., IV, с. 345.

Ինչպես ակնհայտ է, Յերակլը Իբրահիմի քաղաքականությունը որակում է որպես շրջադարձ և Կրաստանի հետ թշնամանալը ևս կապում-պայմանավորում է մելիքների և Ռուսաստանի միջև բանակցությունների փաստի հետ: Մինչ այդ, ըստ Յերակլի, Իբրահիմը իբր «պահպանել» է ռուսամետ ու վրացամետ դիրքորոշում: Յերակլը, այս դեպքում, անշուշտ, անկեղծ էր Իբրահիմի մտավախությունների գնահատության խնդրում: Մինչ այդ էլ Յերակլը, տեղեկացվելով Տամարային Ալի-Մուրադ խանի մոտ բանակցությունների ուղարկելու Պ. Ս. Պոտյոմկինի մտադրության մասին, դեռևս 1784 թ. դեկտեմբերի 28-ի նամակում զգուշացրել էր նրան, թե չափտի առիթ տալ Իբրահիմին կասկածելու իրենց (իմա՝ ռուս և վրաց կողմերի - Պ. Չ.) անկեղծությանը՝ ապագա ծրագրերի առումով. «Неоднократно писали мы к в. в., что Ибраимхан ежели увидит в нас хоть самую малую перемену и колебание мысли, тотчас ганжинского Магмет хана со всею его фамилиею отпустит и без того с турками, Адрибежанскими ханами и Дагестанскими начальниками имеет сношение и тем более приклонится он к ним и с ними соединится и дело более затруднение получит; Ганжа потеряется и Карабах против нас становится»¹.

Շուտով Իբրահիմին հաջողվում է Գանձակի խանությունը իրոք դուրս հանել Յերակլի տիրապետությունից և այնտեղ իշխանության բերել Ջավադ խանին ու հաստատել իր ազդեցությունը²: Իբրահիմը հայ-ռուսական բանակցությունների մասին իրեղեն ապացույցներ է ստանում նամակատար-դեսպանագնաց Գաբրիել Կարախանովին Գանձակում ձերբակալելու, նրան Շուշի տեղափոխելու և այնտեղ հարցաքննելու միջոցով, որին հաջորդում են Արով, Բախտամ ու Մեջլում մելիքների և Գանձասարի Յովհաննես Կաթողիկոսի բանտարկությունները 1787 թ.: Յովհաննես կաթողիկոսը և Մելիք Բախտամը սպանվում են, իսկ Արով և Մեջլում մելիքներին հաջողվում է փախուստով միայն ազատվել: Յերակլին և Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Բուրնաշևին ոչինչ չէր մնում անել, քան համատեղ արշավանք կազմակերպել դեպի Գանձակ՝ այնտեղ Յերակլի տիրապետությունը վերականգնելու հա-

¹ Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х - начало 90-х годов XVIII в.), с. 212-213.

² А. Р. Иоаннисян, Россия..., с. 181-182.

Հայոց օժանդակությունը փնտրելու խնդրում հակադրվում էին վրաց-
ռուսական շահերը, իսկ Հայաստանի մահմեդական իշխանությունները
Հայոց ազատագրական ձգտումների մեջ, բնականաբար, տեսնում էին
միայն իրենց տիրապետության վախճանը: